

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Նուիրապետական Աթոռները

**Պատրաստեց՝
Կարօ Պետրոսեան
«Ֆերահեան» Երկրորդական Վարժարանի
Աշակերտութեան համար**

Հայ ժողովուրդի դարաւոր պատմութեան ընթացքին Հայաստանեայց Եկեղեցին կը նկատուի կարեւոր այն հաստատութիւնը, որ մեծ դերակատարութիւն ունեցաւ ժողովուրդի ոչ միայն կրօնական, այլև ընկերային, մշակութային եւ քաղաքական կեանքին մէջ:

Ժողովուրդը քրիստոնէական կրօնին բարոյական եւ ընկերային սկզբունքներու պահանջները կանուխէն իւրացնելով, 301 թուին աշխարհի մէջ դարձաւ առաջինը, որ զայն պետական կրօն յայտարարեց:

Այնուհետեւ, Հայ Եկեղեցին մնաց ոչ միայն կրօնի առաջնորդ, այլև ընդհանուր կերպով ժողովուրդի մշակոյթին ջահակիրն ու դպրոցը:

Իր ժամանակներուն ընդհանրապէս կազմելով ժողովուրդի ամենէն զարգացած խաւը, անոր բարձրաստիճան ու պարզ սպասաւորները դարձան բռնատիրութեանց դէմ հայ աշխարհային ղեկավարներու բնական գործակից, մանաւանդ՝ քաղաքական սուր տագնապներու ընթացքին:

Ծանօթ են եկեղեցւոյ եւ պետութեան (թագաւորներու) գործակցութեանց բարիքները, որոնց գլխաւոր պտուղը տակաւին Ե. դարուն, եղաւ Հայ Այբուբենի ստեղծումը:

Ծանօթ են Ոսկեդարուն հայ դպրոցի եւ գրչութեան ծաղկումը, ազգային պատմագրութեան սկզբնաւորումը, թարգմանչական հրաշալի իրագործումները, ուսման տարածումի ճիգերը. աւելի ուշ՝ բարձրագոյն ուսմանց վանքերու արդիւնաւետ գործունեութիւնները, ինչպէս նաեւ բազմապիսի ընկերային բարեսիրական նախաձեռնութիւնները:

Ընդհանուր այդ ճիգերուն մէջ, իր հոգեւոր-մշակութային եւ ընկերային մարզերով՝ Հայ Եկեղեցին եղաւ առաջատար ուժ:

Իսկ այն պարագաներուն, երբ թշնամիները կը յաջողէին չեզոքացնել քաղաքային իշխանութիւնները, եկեղեցին՝ ժողովուրդին համար կը դառնար ապաւեն, պաշտպան եւ յոյս:

Տրուած այս իրողութիւններով, անկասկած անհրաժեշտ կը դառնայ, որ «Ֆերահեան» յաճախող հայ ուսանողը ընդհանուր կերպով հաղորդուի Հայաստանեայց Եկեղեցւոյ նաեւ ներկայի իրավիճակին, ծանօթանայ անոր Նուիրապետական Աթոռներուն, կառոյցին եւ բազմաճիւղ գործունեութեանց դաշտին: Նկատի պէտք է ունենալ նաեւ, որ հայ ժողովուրդի թուահամարին 85էն 90 առ հարիւրը հաւատացեալներն են Հայաստանեայց Եկեղեցիին, իսկ 10էն 15 առ հարիւրը՝ Կաթողիկէ են կամ Աւետարանական:

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ Նուիրապետական Աթոռները

- Հայց. Առաքելական Եկեղեցին ներկայիս ունի նուիրապետական չորս աթոռներ.
- Ա.- Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւն՝ Ս. Էջմիածնի մէջ, Հայաստան,
 - Բ.- Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն՝ Անթիլիասի մէջ, Լիբանան,
 - Գ.- Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւն՝ Երուսաղէմի մէջ, Պաղեստին-Իսրայէլ,
 - Դ.- Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարքութիւն՝ Իսթանպուլի մէջ, Թուրքիա:

Ա.- ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ՝ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Հայաստանեայց Եկեղեցւոյ նախամեծար Ս. Աթոռը Ս. Էջմիածինն է, Հայաստանի մէջ, որ Աթոռանիստ Կեդրոնն է Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց սրբազնագոյն կաթողիկոսին:

Այնտեղ՝ Մայր Տաճարը եւ նուիրապետական Ս. Աթոռը հիմնուած են հայոց մեծագոյն հայրապետին՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչին կողմէ, գործակցութեամբ Տրդատ Գ. թագաւորին:

Ըստ ավանդութեան, մեծ հայրապետը տեսիլք ունեցած է, որուն մէջ Միածին Որդին երկինքէն իջած եւ ցուցմունք կատարած է, թէ՛ հոն պետք է կառուցուի Հայաստանեայց Եկեղեցւոյ Կեդրոնը: Այդ հրաշալի տեսիլքին հետեւողութեամբ՝ 302-303 թուականներուն կը կառուցուի Ս. Եկեղեցին եւ այդ հիմունքով՝ ան կը կոչուի Էջ-Միածին. այսինքն՝ ուր որ իջաւ Միածինը:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ ամբողջ հայ ժողովուրդը քրիստոնեական հաւատքով լուսաւորելէ ետք, նաեւ հաստատելէ ետք Ս. Էջմիածինը իբրեւ քրիստոնեայ Հայաստանի Սրբազան Կեդրոն, ավանդութիւն դարձաւ, որ յաջորդական կաթողիկոսները իրենց գործունեութիւնները ծաւալեն այդ կեդրոնէն:

Դժբախտաբար սակայն, յետագային ստեղծուեցան քաղաքական դժուարին պայմաններ: Հայաստան կորսնցնելէ ետք իր անկախութիւնը, երբ երկիրը 387 թուին բաժնուեցաւ յոյներու եւ պարսիկներու միջեւ, յոյներ փորձեցին Հայաստանեայց Եկեղեցին ենթարկել իրենց. իսկ պարսիկներ՝ բռնի միջոցներ ի գործ դրին ժողովուրդը կրօնափոխ դարձնելու, որուն պատճառով յետագային տեղի ունեցաւ 451 թուի Կարդանանց պատերազմը:

Տագնապալի եւ քաղաքական անորոշ նման պայմաններու բերումով, 484 թուին, որոշում կ'առնուէր Ամենայն Հայոց Հայրապետութեան Աթոռը ամժամեայ կերպով փոխադրել ավելի ապահով շրջան մը: Այդպէս՝ 302-303 թուականներէն ետք, մինչեւ 481 թուականը Ս. Էջմիածինը կեդրոն ունենալէ ետք, Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռը, զանազան վայրեր կը փոխադրուի հետեւեալ թուականներուն.

- 484-ին՝ Դուին:

- 931-ին՝ Ախթամար:

- 944-ին՝ Արգինա (Շիրակի գաւառ, Կարսէն 64 քմ. արեւելք՝ գիւղ-բերդ):

- 992-ին՝ Անի

Բագրատունեաց թագաւորութեան անկումէն ետք՝ Փոքր Հայքի մէջ:

- 1066-ին՝ Ծամնդաւ (Կեսարիայէն արեւելք, այժմ Չամանտ անունով գիւղ):

Դէպի Կիլիկիա

- 1105-ին՝ Շուղրի Սեւ լէրան Կարմիր վանքը:

- 1116-ին՝ Ծովք (Եփրատէն արեւմուտք՝ Տլուք գաւառին մէջ, կառուցուած՝ Գրիգոր

Պահլաւունի Կաթողիկոսին կողմէ 1113-1166):

- 1149-ին՝ Զոմկլա:

- 1193-ին՝ Սիս, մինչեւ 1441:

ԿԱՐԵՆՐ ԷԶԳԱՅԻՆ-ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Կարենոր Է ինչատակել, որ 1441 թուին, Էջմիածնի մէջ կը գումարուի Ազգային-Կրօնական Ընդհանուր Ժողով, որ կը քննէ հայ ժողովուրդի քաղաքական իրավիճակը: Ժողովը կ'որոշէ, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Ս. Աթոռը փոխադրուին Սիսէն Էջմիածին:

Այդ թուին, Սիսի մէջ Ամենայն Հայոց Կաթողիկոսն էր Գրիգոր Թ. Մուսաբէկեանց: Հայրապետը ժողովի գումարման իր համամտութիւնը յայտնած ըլլալով հանդերձ, նկատի առած իր յառաջացեալ տարիքը, համաձայն չի գտնուիր անմիջապէս փոխադրուելու:

առաջարկ-հրաւերին: Տրուած այդ պայմաններուն մէջ, Էջմիածնի Ազգային-Կրօնական Ժողովը կ'որոշէ ընտրել նոր Ամենայն Յայոց Կաթողիկոս. կ'ընտրուի Կիրակոս Ա. Վիրապեցի (1441-1443):

ՎԵՐՁԻՆ ՀԱՆԳՐՈՒԱՆԸ

Յիշեալ թուականէն՝ 1441-էն սկսեալ մինչեւ այժմ, Ամենայն Յայոց Կաթողիկոսութեան աթոռնիստը կայունացած՝ կը մնայ Ս. Էջմիածինը:

Սակայն, վերջին՝ ԺԵ-էն Ի, 5-6 դարերու հանգրուանը հայ ժողովուրդի պատմութեան մէջ, դժբախտաբար եղաւ աւելի տագնապալի՝ քան նախորդ դարերը:

Հայ ժողովուրդը յարատեւօրէն մնաց տառապանքի մէջ եւ պատմական Հայաստանը՝ կռուախնձոր եւ ռազմադաշտ՝ այս անգամ օսմանեան թուրքերուն, պարսիկներուն եւ Ռուսիոյ միջեւ:

Հայաստանեայց Եկեղեցին աշխարհային ղեկավարներու հետ մնայուն կերպով մնաց յայտնի կամ գաղտնի խորհրդակցութիւններու եւ պայքարի մէջ, ընդդէմ բռնատիրութեանց:

ՃԳՆԱԺԱՍ ԵՒ ԴԱԺԱՆ ՏԱՐԻՆԵՐ

Ամենայն Յայոց Յայրապետութիւնը 20րդ դարուն հայ ժողովուրդին հետ ապրեցաւ պամտութեան ամենածանր տագնապները:

- 1903-ի Յուլիսին, ցարական պետութիւնը հրամանագրով որոշեց բռնագրաւել Հայաստանեայց Եկեղեցւոյ ունեցուածքը իր բոլոր թեմերուն մէջ:

- 1915-ին թուրքեր գործադրեցին ցեղասպանական ոճիրը: Աննախընթաց Եղեռն եւ գաղթականութիւն:

1918-ին մահու եւ կենաց ճակատամարտներ՝ Թուրքիոյ զինեալ ուժերու նախայարձակումներուն դէմ. Սարդարապատ, Ղարաքիլիսա, Բաշ Ապարան: Ս. Էջմիածինը ճակատագրական այդ մարտերուն, կը բերէ իր պատուաւոր մասնակցութիւնը Գարեգին Եպս. Յովսէփեանցի ղեկավարութեամբ:

- 1920 թուականէն սկսեալ՝ համայնավարական տիրապետութիւն Հայաստանի վրայ. սկիզբ՝ Եկեղեցիներու աւերածութեան եւ Եկեղեցականութեան անէացումին:

Կը բռնագրաւուին եւ հաշուեյարդարի կ'ենթարկուին բոլոր Եկեղեցիներն ու կրօնականները: Չի խնայուիր նոյնիսկ Ամենայն Յայոց Կաթողիկոսը...:

ԿԱՅՈՒԹԵԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

Համաշխարհային երկրորդ պատերազմէն ետք, համայնավարութիւնը որոշ չափով մեղմացնելով հակակրօնական իր քաղաքականութիւնն ու կեցուածքը Եկեղեցւոյ հանդէպ, թոյլ տուաւ որ հայ ժողովուրդը վերստին ընտրէ իր Ամենայն Յայոց Կաթողիկոսը: Աթոռը թափուր էր 1938-ին՝ Խորէն Ա. Սուրատբեկեան Յայրապետի ողբերգական մահէն ետք:

Համայնավարութեան տարիներուն, երկու անգամ տեղի ունեցան Ազգային Կրօնական Ժողովներ եւ ընտրութիւն:

Վերջին ընտրութեան արդիւնքով, Վեհափառ Կաթողիկոս Վազգէն Ա. Պալճեան, բախտաւորութիւն ունեցաւ տեսնելու նաեւ նորանկախ Հայաստանը:

Մինչ այդ՝ Հայաստանի եւ Սովետական Միութեան ամբողջ տարածքին ապրող 6-7 միլիոն հայութեան կրօնական պահանջները գոհացնելու համար, գրեթէ Եկեղեցական չէր մնացած:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, վերանկախութեան 1991ի նոր հանգրուանին, նոր թափով կը սկսէր վերականգնումի աշխատանքներուն իր պատմական առաքելութիւնը ծաւալելու հոգեւոր, կրօնական, քարոզչական եւ մշակութային մարզերու մէջ:

Ներկայիս՝ 2007 թուին, համաձայն Ս. Էջմիածնի պաշտօնական տարեցոյցին, Ամենայն Յայոց Կաթողիկոսութեան միաբանութիւնը կը հաշուէ 48 եպիսկոպոսներ, 90 վարդապետներ եւ հոյլ մը քահանաներ:

Միաբանութեան բարձրաստիճան Եկեղեցականները, Հայաստանի եւ արտերկրի մէջ 36 կազմակերպուած թեմերու մէջ կ'առաջնորդեն հայ ժողովուրդի հաւատացեալ

գաւակները կրօնական, բարեսիրական, մշակութային եւ հայրենասիրական գործունեութիւններով:
Յուսադրիչ է ապագան:

ՅՈՂԵՆՈՐ-ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ս. Էջմիածնի Մայր Աթոռը աշխարհացրիւ հայութեան հոգեւոր պահանջները գոհացնելու համար, ունի կրօնականներ պատրաստելու հետեւեալ հաստատութիւնները.-

- Գեորգեան Յոգեւոր Ճեմարան - Աստուածաբանական համալսարան:
- Սեւանի Վազգէնեան Յոգեւոր Դպրանոց:

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՍՈՒՆՔ ԵՒ ՏՊԱՐԱՆ

Մայր Աթոռի կարեւոր գործունեութիւններուն մաս կը կազմէ Հրատարակչական Բաժանմունքը, ուրկէ լոյս կ'ընծայուին կրօնական, պատմական, մշակութային արժէքաւոր գործեր: Անոնց ամբողջութեամբ՝

- «Էջմիածին» պաշտօնաթերթը, եւ
- «Քրիստոնեայ Հայաստան» թերթը:

ԹԱՆԳԱՐԱՆ-ՊԱԿԵՐԱՍՐԱՀ

Մասնաւոր յիշատակութեան արժանի է թանգարանը, որուն կառուցը իրականացած է յայտնի բարերար՝ Ալեք Մանուկեանի նուիրատուութեամբ:

Հոն խնամքով կը պահուին նշանաւոր նկարիչներու արժէքաւոր գործեր, պատմական թանկագին առարկաներ, հազուագիւտ գոյքեր, եկեղեցական զգեստներ, ուշագրաւ նուէրներ եւայլն:

Այսուհանդերձ պէտք է նշել, որ Ս. Աթոռի հարուստ մատենադարանի բազմադարեան ձեռագիր եւ մագաղաթեայ մատենաներու հաւաքածոն, համայնավար իշխանութեան շրջանին բռնագրաւուելով՝ փոխդրուած էր Երեւան՝ եւ տեղադրուած Ազգային Մատենադարանին մէջ:

1962-ին, Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդեան 1600 ամեակին նուիրուած շքեղ հանդիսութիւններուն, անոնք դարձան կորիզը Ս. Մեսրոպ Մաշտոցի անուան հռչակաւոր եւ պատուաբեր մատենադարանին:

ՍԱՅՐ ԱԹՈՐԸ ՆԵՐԿԱՅԻՍ

- Թափով առաջ կը տարուին գանազան տեսակի շինարարութիւններ:
- Վերականգնած է արդէն Կաթողիկոսական Ս. Աթոռի հեղինակութիւնը:
- Օտար այցելուներ՝ նախագահներ, դիւանագետներ, նշանաւոր անձնաւորութիւններ, հանդիպելէ ետք Երեւանի մէջ հանրապետութեան նախագահին, առաջին իսկ հերթին կ'ուղղուին Ս. Էջմիածին, տեսակցելու համար Ամենայն Հայոց Հայրապետին հետ:

1999-Էն ի վեր Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսն է՝ ազգընտիր հայրապետ՝ Գարեգին Բ. Ներսիսեան, որ Հայաստանեայց Եկեղեցւոյ Քրիտոսի առաքեալներուն Թաղեսոսի եւ Բարթողիմէոսի կողմէ հիմնադրուելէ ետք, յաջորդական 132րդ գահակալն է:

Բ.- ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄԱԿԱՆ

Ծանօթ է, որ քաղաքական աննպաստ պայմաններու բերումով, Ամենայն Յայոց Կաթողիկոսական Աթոռանիստը, սկսեալ 484 թուականէն կը տեղափոխուի շրջանէ շրջան մինչեւ 1441 թուականը (957 տարի):

Այդ ժամանակամիջոցի (484 թուականէն մինչեւ 1441 թուականը) վերջին շրջանը կ'ըլլայ՝ Կիլիկիոյ տարածքը, ուր Աթոռը կը փոխադրուի յաջորդաբար չորս քաղաքներ.

- Շուղրի Սեւ լեռան վանքը՝ 1115-ին,
- Ծովք՝ 1116-ին,
- Յռոմկլա՝ 1147-ին,
- Սիս՝ 1293-ին:

Ամենայն Յայոց Կաթողիկոսները Կիլիկիոյ մէջ կը գործեն մինչեւ 1441 թուականը (336 տարիներ): Վերջին Կաթողիկոսը Սիսի մէջ, կ'ըլլայ Գրիգոր Թ. Մուսաբէկեանց, ընտրուած՝ 1439-ին:

1441 թուին, Էջմիածնի մէջ կը գումարուի Ազգային Ժողով, որ քննելէ ետք ժամանակի քաղաքական ընդհանուր դրութիւնը, կ'որոշէ, որ Ամենայն Յայոց Կաթողիկոսութիւնը տեղափոխուի Էջմիածին:

Գրիգոր Թ. Մուսաբէկեանց Կաթողիկոսը իր հաւանութիւնը կու տայ Էջմիածնի Ազգ. Ժողովի գումարման եւ որոշումներուն. սակայն, առաջացած իր տարիքը նկատի ունենալով, կը շարունակէ մնալ Սիս: Այդ պատճառով, Էջմիածնի մէջ տեղւոյն վրայ կ'ընտրուի Ամենայն Յայոց նոր Կաթողիկոս, յանձին՝ Կիրակոս Ա. Վիրապեցիի (1441-1443):

Սիսի մէջ Գրիգոր Թ. Մուսաբէկեանց Յայրապետը կ'ապրի մինչեւ 1446 թուականը:

Վախճանումէն ետք, տեղի կ'ունենայ նոր Կաթողիկոսի ընտրութիւն: Կ'ընտրուի՝ Կարապետ Ա. Եւդոկացի, որ կը դառնայ **Կիլիկիոյ Յայոց առաջին Կաթողիկոսը** (1446-1477):

Այնուհետեւ, մինչեւ մեր ժամանակները, Կիլիկիոյ Աթոռը կ'ունենայ յաջորդական 41 կաթողիկոսներ: Վերջինը, 41րդ Յայրապետը՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառն է, ընտրուած՝ 1995-ի Յունիսի 28-ին:

ՍԻՍԷՆ՝ ԱՆԹԻԼԻԱՍ

Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հիմնադրութեան տարիներէն սկսեալ, տարածքին մէջ ՎՆ Կիլիկիա - կը տիրէ քաղաքական տագնապալի վիճակ:

Օսմանցիներ՝ Սուլթան Սուլէյման Ա.ի (1520-1560) տարիներուն կը գրաւեն Կիլիկիան եւ զայն կը վերածեն նահանգի մը:

Անկանոն ցեղախումբեր դժուարութիւններ կու տան Սիսի Կաթողիկոսութեան, որ յաճախ նաեւ ուղղակի յարձակումներու կ'ենթարկուի: Այդ պայմաններուն մէջ, երբեմն Աթոռանիստը կը տեղափոխուի Ատանա, երբեմն՝ Յալէպ...: Համեմատաբար հազուադէպ կ'ըլլան խաղաղ տարիները, երբ կաթողիկոսներ կը լծուին հոգեւոր, մշակութային, շինարարական աշխատանքներու:

Սուլթանական իշխանութիւնը ընդհանրապէս կ'անտեսէ Սիսի կաթողիկոսներուն դժուարութիւնները: Աւելի շատ՝ ան կը կարեւորէ Պոլսոյ պատրիարքութիւնն ու անոր հեղինակութիւնը:

19րդ դարուն, ցեղախումբերու ասպատակութիւնները Սիսի եւ ընդհանրապէս հայութեան դէմ, կ'արձանագրեն նոր մագլցումներ:

20րդ դարու սկիզբը, անոնք կը ստեղծեն պատրուակներ ահաբեկելու Կիլիկիոյ հայերը: 1909-ի Ապրիլի սկիզբը Ատանայի եւ զանազան քաղաքներու մէջ, կը կոտորուին 30,000 անմեղ հայեր:

1915-ին՝ արդէն Եղեռն է Պատմական Հայաստանի ամբողջ տարածքին:

Տեղասպանութիւնն է բռնագաղթ: Կը բնաջնջուի մէկ ու կէս միլիոն հայութիւն: Կը դատարկուի ամբողջ Պատմական Հայաստանը:

Նոյն ճակատագրին կ'ենթարկուի նաեւ Կիլիկիան: 1920-1922 թուականներուն՝ հայ չի մնար նաեւ հոն:

Ջարդերէն հրաշքով վերապրողներ, բռնագաղթի ենթարկուածներ, ամենատխուր պայմաններու մէջ կը հասնին Սուրիա, Լիբանան, Իրաք, Յորդանան եւ ոմանք ալ՝ Կիպրոս:

Դժբախտացած Սահակ Կաթողիկոս (1903-1939), հետն առած վանքին սրբութիւնները, կարելոր գոյքեր եւ գրքեր, 1921-ին, Սիսէն անդարձ կը մեկնի դէպի Զալէպ, Սուրիա: Թրքական խուժանը կը թալանէ վանքը եւ վերջին հարուած մը տալով՝ գայն կը վերածէ աներակոյտի:

Այդպէս՝ 1921-ին, Սիսը կը դադրի Կաթողիկոսութեան կեդրոն ըլլալէ:

Յայրապետը ինք եւս կը դառնայ գաղթական: 8-9 տարիներ կ'ապրի անձկալից եւ անորոշ կեանք մը: Անկէ՝ պատշաճ յարաբերութիւններ հաստատելով, կը յաջողի 1929-ի Մարտ 4-ին ամերիկեան «Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյց Զիմնարկութեան» հետ 5 տարուան համար պայմանագիր կնքել՝ Պէյրութի մերձակայքը՝ Անթիլիաս գիւղին մէջ գտնուող իր հաստատութիւնը իբր կաթողիկոսարան գործածելու համար:

Հաստատութիւնը եղած էր Հայ Որբանոց 1922 թուականներուն:

Սահակ հայրապետ, համաձայն պայմանագրութեան, 1930-ին կը փոխադրուի Անթիլիաս եւ անմիջապէս կը ձեռնարկէ Կաթողիկոսութիւնը հիմնաւորելու անհրաժեշտ աշխատանքներուն:

ՆՈՐ ՀԱՆԳՐՈՒՄՆԸ

1930 թուականն է այդ:

Կը սկսի նորագոյն շրջանը Կիլիկիոյ Հայրապետութեան Աթոռի պատմութեան մէջ:

Սահակ Հայրապետ նախ կը ձեռնարկէ նոր դպրեվանքի հիմնադրութեան (1930):

Կը հաստատէ տպարան, կը հրատարակուի «Հասկ» պաշտօնաթերթը, կը կազմակերպուին ազգային ժողովական հոգեւոր կեանք, թեմեր, դպրոցներ եւայլն:

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը - արդէն 1929-ին - Ամենայն Հայոց Հայրապետի բարեհաճութեամբ, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կը փոխանցէ հոգեւոր տիրութիւնն ու իշխանութիւնը Սուրիոյ, Լիբանանի եւ Կիպրոսի հայութեան: Կը փոխանցուին նաեւ այդ երկիրներու մէջ գոյութիւն ունեցող եկեղեցիներն ու կալուածները:

Սփիւռքի մէջ այս նոր նախաձեռնութեանց նկատմամբ ստեղծուած յոյսի եւ լաւատեսութեան մթնոլորտին մէջ, տեղի կ'ունենան յիշատակութեան արժանի պատմարժէք նախաձեռնութիւններ:

ԻՐԱԳՈՐԾՈՒՄՆԵՐ

Շուրջ քառորդ դար՝ սկսեալ 1930 թուականէն մինչեւ 1952ը,

- Շերունի Սահակ Հայրապետին (1903-1939),

- Աթոռակից Բաբգէն Կաթողիկոսին (1930-1936),

- Պետրոս Ա. Սարաճեան Կաթողիկոսին (1940), եւ

- Գարեգին Ա. Յովսէփեանց Կաթողիկոսին (1943-1952) տարիները կը դառնան վերակազմութեան արդիւնաւոր շրջան:

ԱՆԹԻԼԻԱՍԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՍԵՓԱԿԱՆԱՅՈՒ

Կաթողիկոսներու ճիգերով եւ ընդառաջաւելով մասնաւոր կոչերու՝ Գահիրէն Տէր եւ Տիկ. Սիմոն եւ Մաթիլտ Գայրգճեաններ Կաթողիկոսարանի վարձու տարածքը կը գնեն եւ կը նուիրեն Կաթողիկոսութեան:

ԴՊՐԵՎԱՆՔԻ ԵՒ ՎԵՅԱՐԱՆԻ ԾԻՆՈՒԹԻՒՆ

Համաժողովրդային խանդավառութեամբ, տեղի կ'ունենան նուիրահաւաքներ, որոնց արդիւնքով՝ Կաթողիկոսարանի հողատարածքը սեփականացած՝ անմիջապէս կը ձեռնարկուի շինարարական աշխատանքներու. կը բարձրանայ Դպրեվանքի շէնքը (1939-ին), եւ կը կառուցուի Վեհարան:

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻԶ ՄԱՅՐ ՍԱՃԱՐ

Պոլսոյ Պատրիարք Մեսրոպ Ս. Արք.ի բարոյական ջանքերով՝ կը յայտնուի, որ մեծահոգի բարերար մը կը ստանձնէ Անթիլիասի Կաթողիկոսութեան մայր տաճարի շինութիւնը:

Գեղակերտ եւ սքանչելի տաճարը՝ կը կառուցուի 1938-1940 թուականներուն:

Բարերարի մահէն ետք, կը յայտնուի պատուական անունը՝ Տիար Սարգիս Գևաճեան, Կ. Պոլսէն:

Ս. ԱՏԵՓԱՆՈՍ ՄԱՏՈՒՐ

Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարի կողքին, տպաւորիչ շինութիւն է Մեծ Եղեռնի ընդհանուր Նահատակաց յիշատակին նուիրուած Ս. Ստեփանոս Նախավկայի անունով մատուռը, որուն մէջ ամփոփուած են մաս մը Տեր-Զօրէն բերուած անթաղ զոհերու նշխարներէն:

Մատուռը կառուցուած է կիպրահայ Տիար Վահրամ Իւթիւճեանի բարերարութեամբ:

ՄԱՏԵՆԱՂԱՐԱՆ-ԹԱՆԳԱՐԱՆ

1953-ին, Կիւլապի Կիւլպէնկեան Զիմարկութեան բարերարութեամբ, կը կառուցուի մատենադարանի եւ թանգարանի գեղակերտ շէնքը:

Մատենադարանին մէջ կը տեղադրուին հազարաւոր գրքեր (1959-ին՝ 13,000 գիրք): Անոնց մէջ՝ պատմական, բանասիրական, կրօնական, գրական, Նաեւ՝ պարբերական մամուլի արժէքաւոր հաւաքածոներ:

Մատենադարանը ունի Նաեւ հին ձեռագիրներու, մագաղաթեայ մատեաններու արժէքաւոր նմոյշներ:

ԹԱՆԳԱՐԱՆԸ ԴՅՏՉԵՏԷ ԿԱՐԳԱՒՈՐՈՒԾ՝

Հայ եւ օտար այցելողներ կ'այցելեն անոր արուեստի գանազան բաժանմունքները եւ հիացում կ'արտայայտեն: Հոն կը ցուցադրուին հին դրամներու նմոյշներ, թանկագին զգեստներու ժառանգ, արծաթեայ ձեռագործ սրբութիւններ, անուանի նկարիչներու ստեղծագործութիւններ, եւայլն: Ներկայիս, հիացում առթող հաստատութիւն է. ունի յատուկ տնօրէնութիւն:

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԶԱՍԱԼԻՐ՝ ԼԵՈՆԱԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ

Դպրեվանք.- Կարելոր իրագործումներու կարգին նշանակալի է կառուցումը լեռնալիբանանի (Պիքֆայայի) խաղաղ բարձունքներուն վրայ կառուցումը դպրեվանքի նոր շէնքին՝ բարերարութեամբ Մանչեստրէն Տիար Սարքօ Պագրճեանի:

Գործօն դպրեվանքը՝ այս բաժնին մէջ է 1956-էն ի վեր:

Ս. Աստուածածին Եկեղեցի.- Նոյն բարձունքին վրայ գեղեցիկ կառոյց է Ս. Աստուածածին Եկեղեցին, որուն ազնիւ բարերարներն են Պէյրութէն տէր եւ Տիկ. Երուանդ ՏԵՄԻՐՃԵԱՆ:

Վեհարան.- Դպրեվանքին եւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ կողքին, նոյն համալիրին մէջ, 1958-ին կատարուած հանգանակութիւններով կը կառուցուի ամառնային վեհարան մը, բարերարութեամբ՝ Սան Ֆրանսիսքոյէն Տէր եւ Տիկ. Ճորճ եւ Նազենի Մարտիկեաններու:

ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԹԻՒՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

Տեղասպանութեան եւ բռնագաղթի հետեւանքով, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբանութեան թիւը ոչ թէ նուազած էր, այլ գրեթէ՝ չքացած:

Միսի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան երբեմնի 13 թեմական վիճակներուն մէջ պաշտօնավարող բազմաթիւ եպիսկոպոսներէն եւ վարդապետներէն, Անթիլիաս հասած եւ վերապրած էին միայն քանի մը կրօնականներ:

Տասնամեակներու ճիգերէ ետք, Ներկայիս, 2007 թուի Կաթողիկոսութեան տարեցոյցի տուեալներով, միաբանութիւնը կը պարզէ հետեւեալ պատկերը.

Վեհափառ Հայրապետի կողքին կը գործեն՝

- 20 եպիսկոպոսներ, եւ

- 23 վարդապետներ:

Եպիսկոպոսները կը պաշտօնավարեն 12 թեմական վիճակներու մէջ, վարդապետները՝ կարելոր քաղաքներու կամ կեդրոններու մէջ, իբր փոխանորդ, հոգեւոր տեսուչ, քարոզիչ կամ կրօնական դաստիարակութեան գործավար, եւայլն:

Դրական երեւոյթ պէտք է նկատել նաեւ հետեւեալը.

Շնորհիւ Դարեվանքին եւ մասնագիտական բարձրագոյն ուսումով հասած կրօնականներու, Կաթողիկոսութիւնը մարդուժով այլեւս դարձած է ինքնաբաւ:

1956-էն այս կողմ, չորս դարեվանեցիներ արժանացած են Կաթողիկոսութեան բարձր պաշտօնին:

Դարեվանքի աւագ եւ միջին սերունդներէն՝

- Վեհափառ Չարեհ Ա. Փայասլեան (1956-63),

- Վեհափառ Խորէն Ա. Բարոյեան (1963-1982),

- Վեհափառ Գարեգին Բ. Սարգիսեան (1982-1995).

(Շնթ. 1977-էն՝ Գարեգին Բ. Աթոռակից, եւ 1995-էն 1999-ը՝

Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ յէջմիածին):

- Վեհափառ Արամ Ա. Բէշիշեան՝ ընտրուած 1995-ի Յունիսի 25-ին:

ԴՊՐԵՎԱՆՔԸ ՆԵՐՎԱՅԻՍ

Դարձեալ, 2007-ի Կաթողիկոսութեան օրացոյցի տուեալներով, Դարեվանքը կը պարզէ հետեւեալ պատկերը.

- Ընծայարանի բաժին՝ 13 տիրացուներ,

- Ժառանգաւորաց կարգեր՝ 34 սաներ,

- Բախանայից մասնաւոր դասարան՝ 5 թեկնածուներ:

ԴՊՐԵՎԱՆՔԸ՝ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՕԳՏԻՆ

Իրողութիւն է, որ Անթիլիասի Դարեվանքը ոչ միայն եկեղեցականներ կը հասցնէ, ի ծառայութիւն Հայ Եկեղեցւոյ, այլեւ, տասնամեակներու ընթացքին տուած է հարիւրաւոր աւարտականներ, որոնք մասնաւոր միջին Արեւելքի նորակազմ հայ գաղութներուն մէջ ծառայած են կամ կը ծառայեն իբրեւ հայկական դպրոցներու տնօրէն, ուսուցիչ, գրող, խմբագիր, հասարակական գործիչ, դպիր, դպրապետ եւայլն. պաշտօններ՝ որոնք անհրաժեշտութիւն են հայ կեանքի մէջ արձագանգելու հայեցի դաստիարակութեան պահանջներուն:

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆԹԻԼԻԱՍԸ ՆԵՐՎԱՅԻՍ

Կաթողիկոսութիւնը վերանորոգ ուժերով, աշխոյժ եւ բազմազան գործունէութիւններ ծաւալող հանրաճանաչ հաստատութիւն է: Կը տանի հայրենանուէր աշխատանք:

Հրատարակչական գործը անսախընթաց համեմատութիւններ ստացած է շնորհիւ նիւթական օժանդակութեանը Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան:

Կը տարուի մշակութային լայնածաւալ աշխատանք՝ բանախօսական, դաստիարակչական, նկարչական, արուեստի, կրօնական եւ գրական տօնախմբութեանց մարզերու մէջ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Հայրապետը Լիբանանի թե՛ պետական, թե՛ քաղաքական, ինչպէս նաեւ միջազգային դիւանագիտական շրջանակներու կողմէ, կը վայելէ արժանապատիւ վարկ ի փառս Կաթողիկոսութեան եւ ի պատիւ հայ համայնքին:

9.- ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԻՒՆ

Բիւզանդական Կայսրութեան ժամանակաշրջանին, քրիստոնէութեան առաջին դարերուն, հայեր կարելոր ներկայութիւն եւ թիւ եղած են Երուսաղէմի մէջ: Այնտեղ՝ կանուխէն կը յարին քրիստոնէութեան եւ նախանձախնդրութեամբ տեր կը դառնան սուրբ վայրերէն կարելոր տարածքներու: Հին Երուսաղէմի չորս թաղամասերէն մէկը, որ ունի շուրջ 150 հազար քառ. մէթր տարածութիւն, կը պատկանի հայերուն, որոնք այնտեղ կը կառուցեն վանքեր եւ եկեղեցիներ: Ի յիշատակ Տեառնեղբայր Յակոբոսի եւ Յակոբոս Առաքեալի, Սիոն լեռան վրայ կը հիմնեն Ս. Յակոբեանց վանքը եւ միաբանութիւնը:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԻՒՆԸ

Դաւանական վեճերը կը շարունակուին եւ յաճախ կը ստանան սուր բնոյթ: Յոյն պատրիարքն ու յոյները մեծ դժուարութիւններ կու տան հայերուն:

636 թուին, արաբական նորայայտ ուժերը կը գրաւեն Երուսաղէմը: Արաբական իշխանութիւնները հակակշռելու համար յոյներն ու անոնց ոտնձգութիւնները՝ կը միջամտեն: Հայոց Միաբանութեան կը շնորհուի հաւասար հեղինակութիւն եւ դիրք: Սկիզբ կ'առնէ՝ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը: Երուսաղէմի հայոց առաջին Պատրիարքը կ'ըլլայ Աբրահամ Եպիսկոպոս (638-

640):

Աբրահամ Պատրիարք կը մեկնի Մուհամմետ Մարգարէին մօտ: Մարգարէն հայոց առաջին Պատրիարքին կը շնորհէ վկայագիր, որով կը հաստատուի, թէ Հայոց Պատրիարքութիւնը անշատ է յունականէն եւ ունի հետեւեալ սեփականութիւնները.

- Ս. Յակոբայ վանքը իր կալուածներով,
- Բեթլեհեմի Ս. Ծննդեան Տաճարը,
- Ս. Յարութիւն Տաճարի կարելոր մէկ մասը,
- Ձիթենեաց լեռան ստորոտը գտնուող Ս. Մարիամ Աստուածածին եկեղեցին,
- Գողգոթայի բարձունքները, եւ
- Արարողական ճշդուած մասնաբաժիններու իրաւունք:

* Մարգարէն իր շնորհագիրով կը պատուիրէ, որ արաբական իշխանութիւններ նաեւ յետագային հոգածու ըլլան ճշդորոշուած իրաւունքներու պահպանման:

* Յաջորդող դարերուն, արաբաբար եւ գործնապէս արաբական իշխանութիւնները կը յարգեն Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան սուրբ տեղեաց իրաւունքները, ինչպէս նաեւ Պատրիարքին հեղինակութիւնը:

ԵՐՈՒՍԱՂԵՍԸ ԿՈՌԻՆԵՆՁՈՐ

Երուսաղէմ քրիստոնէական եւ իսլամական սրբատեղիներու վայր ըլլալով, դարեր շարունակ կը դառնայ թիրախ արշաւանքներու եւ պատերազմներու: Անոր կը տիրեն արաբներ, իսաղակիրներ, սելճուքներ, օսմանեան թուրքեր: Համաշխարհային Ա. Պատերազմէն ետք նաեւ անգլիացիներ, եւ արեւի ուշ՝ դարձեալ արաբներ եւ հրեաներ...:

Բազմազան իշխանութիւններու ժամանակաշրջաններուն, Հայոց Պատրիարքութեան կալուածները ենթարկուելով հանդերձ արեւներու եւ նիւթական վնասներու, կարելի կը դառնայ սակայն յաղթահարել դժուարութիւնները եւ ապահով հասնիլ մինչեւ մեր ժամանակները: Իսկ հայոց Պատրիարքին հեղինակութիւնը, շրջանէ շրջան մերթ ճնշուած, մերթ բարձր, որոշակի կերպով կ'ընթանայ համահունչ՝ տիրապետող օտար ուժերուն եւ անոնց քաղաքական ազդեցութիւններուն:

ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԵԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վանքը Ուխտատեղի.՝ Դարեր շարունակ Երուսաղէմի վանքը կ'ըլլայ հաւատացեալ ուխտաւորներու Հայ Տունը: Հայեր հոն կը հիւրընկալուին եւ հաւատքի իրենց ուխտը կ'իրականացնեն տոհմիկ մթնոլորտի մէջ:

Յոգեւոր Ծառայութիւն Գաղութներուն.- Օսմանեան տիրապետութեան տարիներուն, պատրիարքութիւնը բաւարարած է կրօնական պահանջները Սուրիոյ, Լիբանանի, Կիպրոսի, եւ մինչեւ 1839-ը՝ նաեւ Եգիպտոսի թեմերուն:

1915 թուականներուն, Պատմական Յայաստանի հայութեան վրայ ի գործ դրուած ցեղասպանութենէն ետք, երբ նաեւ Կիլիկիոյ Կաթողիկոսը կը պարտադրուի արտագաղթելու Սիսէն (ղեպի Սուրիա եւ Լիբանան), Երուսաղէմի Յայոց Պատրիարքութիւնը, 1929-ին, հաւանութեամբը Ամենայն Յայոց Յայրապետին, Սուրիոյ, Լիբանանի եւ Կիպրոսի գաղթական հայութեան ՎՆ թեմերուն ՎՆ հոգածութիւնն ու տիրութիւնը կը փոխանցէ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան իրաւասութեան:

1920-էն ետք, երբ համայնավարութիւնը կը տիրապետէ Յայաստանին եւ կը սկսի սովետական բոլոր երկիրներուն մէջ գործադրել կրօնականներուն, եկեղեցւոյ եւ հաւատքի դէմ իր բիրտ քաղաքականութիւնը, Ամենայն Յայոց Կաթողիկոսութիւնը կը յանձնարարէ Երուսաղէմի Յայոց Պատրիարքութեան, որ հոգածու դառնայ արտասահմանի հայ եկեղեցւոյ թեմերուն:

Պատմական այս դժուար ժամանակաշրջանին, որ ճգնաժամ էր Յայ Եկեղեցիին համար, Երուսաղէմի Պատրիարքութիւնը տրուած մարտահրաւերին կու տայ դրական պատասխան եւ կը կատարէ երախտաշատ գործ:

Միաբանութեան նուիրեալ անդամները մինչեւ այսօր, կը մնան պատնէշի վրայ:

Պպրոցներ.- Երուսաղէմի Պատրիարքութիւնը նիւթական միջոցներով կամ հովանաւորութեամբ, ժամանակի ընթացքին ըստ կարիքի բացած է նախակրթարաններ կամ միջնակարգ դպրոցներ, հայ գաղութներուն օգտին:

Ներկայիս կը գործեն Երուսաղէմի մէջ «Թարգմանչաց» վարժարանը՝ հիմնուած 1925-ին Թորգոմ Պատրիարք Գուշակեանի կողմէ, եւ Ամմանի մէջ՝ Ս. Թադէոս եկեղեցւոյ ծխական՝ «Եուզպաշեան» դպրոցը:

Տպարան, Յրատարակչութիւն, Ամսագիր.- Պատրիարքարանը ունի հարուստ աւանդով տպարան՝ հիմնուած 1833-ին: Անկէ հրատարակուած են պատմական, բանասիրական, կրօնա-եկեղեցական, գրական կարեւոր երկեր՝ յօգուտ հայ մշակոյթին:

Նոյն տպարանէն, 1866-ին, սկսած է հրատարակուիլ «Սիոն» ամսագիրը, որ Պատրիարքութեան պաշտօնաթերթն է: Շրջան մը ընդհատում ունենալէ ետք, 1927-էն մինչեւ այսօր կը շարունակէ լոյս տեսնել հայագիտական, կրօնական եւ մշակութային նիւթերու բովանդակութեամբ:

Թանկագին Յարստութիւններ

Երուսաղէմի Յայոց Պատրիարքութեան ամենէն թանկագին հարստութիւնը պէտք է նկատել ձեռագիր մատենաներու հաւաքածոյ-գանձը, որ Երեւանի Ս. Մեսրոպի անուան մատենադարանէն ետք, երկրորդն է հայաշխարհի մէջ:

Հոն կան նաեւ պատմական ժամանակներէ եւ դէմքերէ աւանդ մնացած մեծարժէք առարկաներ եւ սպասներ:

Այդ բոլորին համար յատուկ ձեռագրատուն-թանգարան կառուցուած է՝ 1929-ին, բարերարութեամբ Գալուստ Կիւլպէնկեան Յիմնարկութեան:

Միաբանութեան «Ժառանգաւորաց»ը.- Կարեւոր հաստատութիւն է Պատրիարքարանի «Ժառանգաւորաց»ը, որ բարձրագոյն ուսումնարան է, հիմնուած 1843-4 թուականներուն:

Անկկա՝ արտասահմանի հայ կեանքին մէջ հայագիտական կարեւոր կրթօճախ է: Ընտրուած սաներ՝ հայագիտական ուսմանց առընթեր տիրանալով Յայ Եկեղեցւոյ եւ Ժողովուրդի պատմութեան, աստուածաբանութեան, ծիսագիտութեան եւ իմաստասիրական գիտութիւններու, կը նուիրուին միաբանութեան նպատակներու ծառայութեան:

Կարեւորութեամբ պէտք է յիշատակել նաեւ, որ «Ժառանգաւորաց»ը յաջորդական սերունդներու հասարակական կեանքին ի նպաստ, նուիրած է նաեւ հոյլ մը մտաւորականներ, դաստիարակներ, գրողներ, որոնց գործունէութիւնն ու կեանքը բարիք

եղած են ահաւոր Ցեղասպանութեան եւ գաղթականութեան ենթարկուած հայ ժողովուրդին:

Ծանօթ.- »ժառանգաւորաց«ի արդիական շէնքը՝ իրականացած է 1979-ին, յայտնի ազգային բարերար՝ Ալեք Մանուկեանի նուիրատուութեամբ:

ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Երուսաղէմի Ս. Աթոռին բազմաճիւղ գործունեութիւնները կը շարունակուին նաեւ ներկայիս, հոգածութեան եւ ղեկավարութեանը տակ Նուիրապետական Աթոռի 81րդ Պատրիարքին՝ Ամենապատիւ Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի:

Դ.- ԿՈՍՏԱՆԴՈՒՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐԵՈՒԹԻՒՆԸ

Կ. Պոլիսը Թուրքիոյ մեծագոյն քաղաքն է, որ Ներկայիս կը կոչուի Իսթանպուլ:

Թուրքեր 1453 թուին գայն գրաւելէ ետք, դարձուցին Օսմանեան Կայսրութեան մայրաքաղաք՝ մինչեւ 1923 թուականը: Անկէ առաջ, 430 թուականէն մինչեւ 1453-ը՝ անիկա եղած էր Բիւզանդիոսի մայրաքաղաք եւ նոյն ատեն՝ Յոյն Եկեղեցւոյ Նուիրապետութեան բարձրագոյն կեդրոն: Անիկա Յոյն Եկեղեցւոյ Տիեզերական Պատրիարքին Աթոռանիստ էր «Այա-Սոֆիա» հրաշալի տաճարով, զոր թուրքեր վերածեցին մզկիթի:

Հայեր՝ Պոլսոյ եւ գլխաւոր այլ քաղաքներու մէջ, հնագոյն ժամանակներէն սկսեալ կազմած են գաղութ եւ դարձած են մասնակից երկրի ընկերային, տնտեսական, քաղաքական կեանքին: Պատմական իրողութիւն է, որ բազմաթիւ բիւզանդական կայսրեր ծագումով եղած են հայ:

Երբ թուրքեր վերջնականապէս կը տիրեն սքանչելի այդ քաղաքին, Սուլթանը՝ Մուհամմատ Ֆաթիհ, անյապաղ կարգադրութիւններ կ'ընէ, որ մեծ թիւով հայեր բերուին մայրաքաղաք, որպէսզի զարկ տրուի անոր առեւտրական, շինարարական եւ ընկերային բարգաւաճումին:

Կը գործադրուի ծրագիրը:

Զանի մը տարիէն, 1461-ին, Սուլթանի թելադրութեամբ Պրուսայի Յովակիմ Եպիսկոպոսը իր շրջանակով կը փոխադրուի մայրաքաղաք: Սուլթանը անոր կը շնորհէ Պատրիարքի կոչում՝ յունաց Պատրիարքին համագոր իրաւասութիւններով:

Պատմական այսպիսի դասաւորումը կը դառնայ սկիզբ՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ Պոլսոյ Նուիրապետական Աթոռի հաստատման:

Առաջին Պատրիարքը՝ Յովակիմ Եպիսկոպոս, յանձն կ'առնէ, որ գաղութները բոլոր քաղաքներուն մէջ պահէ հնագանդ եւ հաւատարիմ միայն՝ Սուլթանին:

ՊՈԼՍԱՅԱՅՈՒԹԵԱՆ ԹՈՒՎԱՆ ԱՃԸ

Քաղաքական եւ կրօնական նոր պայմաններուն մէջ կը սկսի հոսքը գաւառներէն դէպի Պոլիս:

17րդ դարուն, Պոլսոյ մէջ հայերը յոյներէն ետք կը կազմեն մեծագոյն թիւը:

Մինչեւ 19րդ դարու վերջը՝ 1880-ական թուականները, հայ համայնքի թիւը ՎՆ Պոլսոյ մէջ ՎՆ կը հասնի 250,000-ի:

Պատրիարքութեան հեղինակութիւնը կը տարածուի բոլոր շրջաններուն վրայ:

18րդ դարուն սկիզբը՝ 1700-ին, ան կ'ունենայ թեմական 20 վիճակ. 1834-ին՝ 36. 1900-ին՝ 43:

Կը գործեն 1181 եկեղեցիներ եւ 132 վանքեր:

Միայն Պոլսոյ մէջ՝ կը կառուցուին 55 եկեղեցիներ:

Սիսի Կաթողիկոսութիւնը եւ Երուսաղէմի Պատրիարքութիւնը իրենց դիրքերը կը զիջին Պոլսոյ Պատրիարքութեան:

1834-ին, գաւառներու մէջ կը գործեն 114 դպրոցներ: Մինչեւ 20րդ դարու սկիզբը՝ գաւառներուն եւ Պոլսոյ մէջ դպրոցներու թիւը կը հասնի 860-ի, 90 հազար երկսեռ աշակերտներով:

1860-ին, Պատրիարքարանը համայնքային եւ կրօնական տարածուն գործերը կարգաւորելու համար կը մշակէ Ազգային Սահմանադրութիւն, որ 1863-ին կը վաւերացուի Սուլթանին կողմէ:

Արեւմտահայութիւնը կ'ապրի մշակութային եւ ընկերային զարթոնք:

Կը ձեւաւորուի Արեւմտահայ գրական աշխարհաբարը:

Մեծ զարկ կը տրուի տպագրական, հրատարակչական, թարգմանական եւ ստեղծագործական աշխատանքներուն:

ԴՊՐԵՎԱՆՔ

Պատրիարքութիւնը երկար ատեն հետամուտ կ'ըլլայ որակաւոր Դպրեվանքի մը հաստատումին:

Պատրիարք Խորեն Արք. Աշոգեան (1888-1894) կ'որոշէ Արմաշի դարաւոր վանքը (հիմնուած 1416-ին) վերածել հոգեւոր բարձրագոյն ուսմանց հաստատութեան մը:

Ծնթ.- Արմաշ գիւղը կը գտնուի Փոքր Ասիոյ հիւսիսը, Իզմիրէն 25 քմ. հեռաւորութեան վրայ:

Դպրեվանքի հիմնադրութեան նախաձեռնութիւնը կը յաջողի՝ գործակցութեամբ հանրայայտ գիտնական եւ մեծանուն կրօնական Մաղաքիա Արք. Օրմանեանի, որ այդ շրջանին վանահայր էր Արմաշի վանքին:

Պատրիարքը անհրաժեշտ միջոցները ապահովելէ ետք, Օրմանեան Արքեպիսկոպոսը կը նշանակէ վերատեսուչ Դպրեվանքին, որուն բացումը կը կատարուի 1889-ի Սեպտեմբեր 18-ին:

Հաստատութեան փոխ տեսչութեան պաշտօնը կը վստահուի գրող-բանաստեղծ Եղիշէ Արք. Դուրեանին. (այն ատեն՝ տակաւին Ծայրագոյն վարդապետ):

Կարճ ժամանակի մը մէջ Դպրեվանքը կու տայ պատուաւոր արդիւնք: Շրջանաւարտներէն շատեր կը դառնան պատմական դէմքեր. ոմանք՝ կ'արժանանան պատրիարքութեան պաշտօնին:

Անշուշտ ափսոս է, որ վանքը ինչպէս նաեւ դպրոցական կառոյցը՝ որուն մէջ մատենադարանը եւ շուրջ 450 հնագոյն դարերէն պահուած ձեռագիր մատենաներ, ամբողջութեամբ կը փճացուին 1915-ի մեծ Եղեռնին:

ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿՈՒՄ

Սուլթան Ապտուլ Համիտ իր ժամանակաշրջանին կը հրամանագրէ, որ հայեր այլեւս մուտք չգործեն Պոլիս:

1895-96 թուականներուն առիթ կու տայ անկանոն ուժերու, որ գաւառին մէջ կոտորեն հայերը: Չոհ կ'երթան շուրջ 300,000 անմեղներ:

Նոյն թուականներուն, առիթ կը ստեղծէ՝ սարսափեցնելու նաեւ Պոլսոյ հայութիւնը. յանկարծակի ջարդեր՝ կը խլեն կեանքը աւելի քան 10,000 պոլսահայերու:

Մինչ այդ՝ կեանքի եւ բարենորոգումներու հայկական պահանջատիրութիւնը, մոլեռանդ թուրք իսլամներու հակաքրիստոնէական զգացումները, պետական հալածանքներն ու անիրաւութիւնները, պատճառ կ'ըլլան, որ Պոլսոյ հայութեան թիւը հետզհետէ նուազի: Կը նուազի նաեւ Պոլսոյ Պատրիարքին (պատրիարքներուն) հեղինակութիւնը:

Ահաւոր Եղեռնէն ետք, 1953-ին է, որ Գարեգին Պատրիարք Խաչատուրեան կը յաջողի հիմնադրել նոր Դպրեվանք մը՝ «Ս. Խաչ» անունով, որ կը գոյատեւէ մինչեւ այսօր:

Թրքական պետութեան օրէնքով, ոեւէ կրօնական չի կրնար Պատրիարք ընտրուիլ, եթէ թրքական հպատակութիւն չունենայ:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

- Պատրիարքարանը 1952-էն ի վեր կը հրատարակէ «Շողակաթ» անունով կրօնական, հայագիտական պարբերական մը, որ երկարատեւ ընդհատումներէ ետք կը շարունակէ լոյս տեսնել նաեւ ներկայիս:

- 1996-ին հիմնուած է նաեւ «Լրաբեր» անունով պարբերաթերթ մը, որով կը հաղորդուին պատրիարքութեան կրօնական, վարչական գործունեութիւնները:

ԵԿԵՂԵՑԻՆԵՐ-ԴՊՐՈՑՆԵՐ

- Ներկայիս, Պոլսոյ մէջ կը գործեն 10-էն 14 եկեղեցիներ:

- Պատրիարքութեան հովանիին տակ կանգուն կը մնան որոշ դպրոցներ՝ ընդհանուրը 3000-4000 աշակերտներով:

Դպրոցները ենթական են թրքական ուսումնական, կրօնական կաշկանդիչ օրէնքներուն: Արտօնուած են դասաւանդել միայն՝ հայերէն լեզուն եւ կրօնը:

Պոլսոյ Հայոց Պատրիարքութիւնը շուրջ չորս ու կէս դար կրօնական, հրատարակչական, մշակութային եւ դաստիարակչական օգտակար եւ կենսունակ պատմութիւն մը ապրելէ ետք, այսօր՝ (եւ 1915-էն սկսեալ) ծանօթ պայմաններու

բերումով, հարկադրաբար կը մնայ կրօնա-եկեղեցական սահմանափակ գործունեության մը շրջագիծին մէջ:

1998-ի Նոյեմբերէն սկսեալ Նուիրապետական Աթոռի պատրիարք հայրն է Ամենապատիւ Տ. Մեսրոպ Արք. Թութաֆեանը, որուն բարձր հովանաւորութեան ներքոյ Թուրքիոյ տարածքին կը գործեն հայ համայնքին պատկան հետեւեալ հաստատութիւնները.

ԴՊՐՈՑՆԵՐ, ԵԿԵՂԵՑԻՆԵՐ, ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԿՐՕՆԱԿԱՆՆԵՐՈՒ ԹԻՒ

| | |
|--|----|
| - Ամբողջ Թուրքիոյ տարածքին՝ եկեղեցիներ | 48 |
| - Պոլսոյ մէջ ազգային վարժարաններ՝ | 15 |
| - Պոլսոյ մէջ Որբանոց վարժարաններ՝ | 2 |
| - Պոլսոյ մէջ Ազգային հիւանդանոց՝ | 1 |
| - Պոլիսէն դուրս, Անթալիայի տարբեր վայրերու մէջ համայնքներ՝ | 16 |
| - Եպիսկոպոսներու թիւ՝ | 2 |
| - Վարդապետներ՝ | 5 |
| - Զահանաներ՝ | 26 |